# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Մուշեղ Գրիգորյանի կողմից ներկայացված ք. Վանաձոր, Թևոսյան փ. 2/13 հասցեում առևտրի սրահի և տեխնիկական շինությունների կառուցում» նախատեսվող գործունեության նախագծի ՇՄԱԳ հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

26.11.2024թ. Վանաձոր համայնք

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը,
- ՇՄԱԳ փորձագետ Մարգարիտա Խաչատրյան,
- Նախագծող Ֆելիքս Հակոբյան
- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Հայկ Վիրաբյան
- Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքածինության բաժնի պետի պաշտոնակատար Արմեն Ալավերդյան
- Շահագրգիռ հանրությունը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2024թ. նոյեմբերի 26-ին՝ ժամը 12:00-ին Վանաձորի համայնքապետարանում տեղի ունեցավ Մուշեղ Գրիգորյանի կողմից ներկայացված ք. Վանաձոր, Թևոսյան փ. 2/13 հասցեում առևտրի սրահի և տեխնիկական շինությունների կառուցման ՇՄԱԳ հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումները վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները.

Համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու համար: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք հաշվի են առնվել

լրամշակում կատարելիս: հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքի և կառավարության Որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է, 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համաձայն կառավարության Որոշման շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոնին:

Այնուհետև Փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, թե ՇՄԱԳ հաշվետվությամբ ինչ է նախատեսվում իրականացնել, ներկայացրեց կառուցապատման տեխնիկական ցուցանիշները նախագծի հետ համեմատելու և տվյալները ճշգրտելու նպատակով:

Հովիկ Մեսրոպյանն առաջարկեց որպեսզի կազմակերպության ներկայացուցիչները ներկայացնեն կառուցապատման վերաբերյալ տեղեկատվությունը, ինչ լուծումներ են առաջարկվել ջրամատակարարման և ջրահեռացման համար, ինչպես նաև ներկայացնեն շրջակա միջավայրի վրա ազդցությունների մեղմման վերաբերյալ տեղեկատվությունը, որին ի պատասխան Վանաձորի համայնքապետարանից նշեցին, որ անձրևաջրերի հեռացման հարցը քննարկման փուլում է նախագծողի հետ:

Հանրային լսումներում այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

Հանրային լսումը լուսանկարվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակցի կողմից:

Արձանագրությանը կցված է հանրային լսումների մասնակիցների ցանկը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ — Հովիկ Մեսրոպյան

Մուշեղ Գրիգորյանի կողմից լիազորված ներկայացուցիչ՝ — Գրիգոր Գալստյան